ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 662 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0049-0105 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնող 08-007-0049-0105 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի սահմաններում նոր առաջացող 0,017738 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Եղիշե Չարենցի փողոց, 3-րդ անցուղի, 2/4 հողամաս»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«30» հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 663-Ա

« 30 » հոկտեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 143-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1. 2023 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ «Առավոտ» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am, Շիրակի մարզպետարանի և Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջերում հրապարակել հայտարարություն՝ մրցույթի անցկացման օրվա, տեղի, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների և հողամասերի նկատմամբ սահմանափակումների մասին՝ համաձայն հավելված 2-ի:

3.Մրցույթը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 137-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

30 հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
հոկտեմբերի 30-ի թիվ 663-Ա որոշման

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մարմաշեն	08-078-0133-0002	ջրային	0,20799	-	-	Ձկնատնտեսային գործունեության ծավալում	Չկան	15000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մարմաշեն	08-078-0133-0004	ջրային	0,46353	-	-	Ձկնատնտեսային գործունեության ծավալում	Չկան	30000

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2 կտոր հողերի վարձակալության մրցույթ:
Մրցույթը կկայանա 2023 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 11:00-ին, Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, գյուղ Մարմաշեն, փողոց 9, շենք 26/4, 2-րդ հարկ, 1-ին սենյակ:
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023 թվականի նոյեմբերի 28-ը ներառյալ:
Հայտերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 13:00-ն, 14:00-ից 17:00-ն ներառյալ (Հայտերն ընդունվում են Մարմաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում):
Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:
Վարձակալության տրամադրվող հողերի նկարագիրը՝
Լոտերի թիվը՝ 2,
Հողերի նպատակային նշանակությունը՝ ջրային,
Վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի,
Մրցույթի ձևը՝ բաց,
Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ,
Նախավճարի չափը վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%,
Քայլի չափը՝ վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մարմաշեն	08-078-0133-0002	ջրային	0,20799	-	-	Ձկնատնտեսային գործունեության ծավալում	Չկան	15000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մարմաշեն	08-078-0133-0004	ջրային	0,46353	-	-	Ձկնատնտեսային գործունեության ծավալում	Չկան	30000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 664-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՋՈՒՌ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-094-0020-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի դրույթներով որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջաջուռ բնակավայրի տարածքում գտնվող 08-094-0020-0015 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,015847 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացու իրավունքների պետական գրանցում կատարելու նպատակով՝ հողամասի սահմանները ճշտել 20236AMUKH հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքով ներկայացված չափագրման փաստաթղթերին համապատասխան և կադաստրային քարտեզում կատարել ուղղում:

2. ՈՒղղման արդյունքում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և 08-094-0145-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի հողամասի հետ համադրվող մասի նպատակային և գործառնական նշանակությունները ուղղել՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«30» հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 665-Ա

<<31>> հոկտեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱԽՈՒՐՅԱՆԻ ՖԵՐՄԱՏԱ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԱ ԳՐԻՇԱՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 129-րդ հոդվածի 1-ին մասի և 130-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 112-Ա որոշման 1-ին կետը և 2023 թվականի օգոստոսի 31-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի <<Ախուրյանի ֆերմատա արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 3180/23 ծանուցումը **որոշում եմ՝**

1.Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի <<Ախուրյանի ֆերմատա արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Արա Գրիշայի Կիրակոսյանի հետ 2021 թվականի հուլիսի 19-ին կնքած աշխատանքային պայմանագիրը՝ 2023 թվականի նոյեմբերի 01-ին:

2.Արա Գրիշայի Կիրակոսյանի վերջին աշխատանքային օր համարել 2023 թվականի հոկտեմբերի 31-ը:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<31>> հոկտեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 666-Ա

<<31>> հոկտեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՆԱՍԻԲԵԿԻ ԻԳԻԹՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 129-րդ հոդվածի 1-ին մասի և 130-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 112-Ա որոշման 1-ին կետը և 2023 թվականի օգոստոսի 31-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի <<Ախուրյանի համայնքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 3182/23 ծանուցումը **որոշում եմ՝**

1.Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի <<Ախուրյանի համայնքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Ռուզաննա Նասիբեկի Իգիթյանի հետ 2017 թվականի նոյեմբերի 13-ին կնքած ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը՝ 2023 թվականի նոյեմբերի 01-ին:

2.Ռուզաննա Նասիբեկի Իգիթյանի վերջին աշխատանքային օր համարել 2023 թվականի հոկտեմբերի 31-ը:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման

բաժնի պետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<31>> հոկտեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 667-Ա

<<31>> հոկտեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 129-րդ հոդվածի 1-ին մասի և 130-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 138-Ա որոշման 1-ին կետը և 2023 թվականի օգոստոսի 31-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի <<Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքած ժամկետային աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 3179/23 ծանուցումը **որոշում եմ՝**

1.Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի <<Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հովհաննես Վոլոդյայի Գրիգորյանի հետ 2021 թվականի մայիսի 31-ին կնքած N 5 ժամկետային աշխատանքային պայմանագիրը՝ 2023 թվականի նոյեմբերի 01-ին:

2.Հովհաննես Վոլոդյայի Գրիգորյանի վերջին աշխատանքային օր համարել 2023 թվականի հոկտեմբերի 31-ը:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<31>> հոկտեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 668-Ա

« 31 » հոկտեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 1-ի թիվ 97-Ա և 2023 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 143-Ա որոշումները՝

Որոշում եմ՝

1. 2023 թվականի դեկտեմբերի 6-ին, ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ «Առավոտ» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am, Շիրակի մարզպետարանի և Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջերում հրապարակել հայտարարություն՝ մրցույթի անցկացման օրվա, տեղի, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների և հողամասերի նկատմամբ սահմանափակումների մասին՝ համաձայն հավելված 2-ի:

3.Մրցույթը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 137-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

31 հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
Հոկտեմբերի 31-ի թիվ 668-Ա որոշման

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մայիսյան	08-077-0213-0022	վարելահող	1,73445	III	ջրովի	Գյուղատն-տեսական գործունեության ծավալում	առկա	20000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մայիսյան	08-077-0044-0056	արոտավայր	0,12309	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	3000
3	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մայիսյան	08-077-0080-0007	վարելահող	0,49800	III	ջրովի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	20000

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
Հոկտեմբերի 31-ի թիվ 668-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 3 կտոր հողերի վարձակալության մրցույթ:
Մրցույթը կկայանա 2023 թվականի դեկտեմբերի 6-ին, ժամը 11:00-ին, Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, շենք 29:
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ:
Հայտերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 13:00-ն, 14:00-ից 17:00-ն ներառյալ (Հայտերն ընդունվում են Մայիսյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում):
Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:
Վարձակալության տրամադրվող հողերի նկարագիրը՝
Լոտերի թիվը՝ 3,
Հողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,
Վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի,
Մրցույթի ձևը՝ բաց,
Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ,
Նախավճարի չափը վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%,
Քայլի չափը՝ վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մայիսյան	08-077-0213-0022	վարելահող	1,73445	III	ջրովի	Գյուղատն-տեսական գործունեության ծավալում	առկա	20000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մայիսյան	08-077-0044-0056	արոտավայր	0,12309	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	3000
3	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մայիսյան	08-077-0080-0007	վարելահող	0,49800	III	ջրովի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	20000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 669 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՄԱՅԱԿ ՀՐԱՉԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՊԱՀԵՍՏԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ կետի, 35-րդ կետի «գ» և «ե» ենթակետերի, 35.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որշման 2-րդ կետի «գ» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-004-0669-0001 կադաստրային ծածկագրով 0,06581 հեկտար մակերեսով հողամասի վրա, քաղաքացի Համայակ Հրաչի Մարգարյանի կողմից ինքնակամ կառուցված 161,37 քառակուսի մետր մակերեսով պահեստը (հետագայում շինություն) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 588-Ա

որոշմամբ ճանաչվել է օրինական, համարվել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն և անշարժ գույքի նկատմանբ համայնքի իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, որոշում եմ՝

1. Օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված շինությունը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-004-0669-0001 կադաստրային ծածկագրով 0,06581 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարելու մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինություններն իրականացրած քաղաքացի՝ Համայակ Հրաչի Մարգարյանին:
2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

1) Շինության վաճառքի գինը կազմում է՝ 390193 (երեք հարյուր իննսուն հազար մեկ հարյուր իննսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
2) Արտադրական նշանակության շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքը սահմանված է 1221 Հայաստանի Հանրապետության դրամ: 0,06581 հեկտար մակերեսով հողամասի օտարման գինը կազմում է՝ 737055 (յոթ հարյուր երեսունյոթ հազար հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է 1127248 (մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:
4) Սույն կետի 3-րդ ենթակետով ձևակերպված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:
5) Ինքնակամ շինությունն իրականացրած անձի կողմից գնման նախապատվության առաջարկն ընդունելու, սակայն 30 օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:
6) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի

ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ինքնակամ կառույցն իրականացրած քաղաքացի Համայակ Հրաչի Մարգարյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«31» հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 670-Ա

<<31>> հոկտեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ԱՐԱ ԳՐԻՇԱՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱԽՈՒՐՅԱՆԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 1.5-րդ և 1.7-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 95-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 112-Ա որոշման 8-րդ կետը և հիմք ընդունելով Արա Գրիշայի Կիրակոսյանի դիմումը **որոշում եմ՝**

1.Արա Գրիշայի Կիրակոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի <<Ախուրյանի մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Արա Գրիշայի Կիրակոսյանի հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր 2023 թվականի նոյեմբերի 01-ին՝ մինչև թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, բայց ոչ ավել քան վեց ամիս ժամկետով և աշխատանքի սկիզբ համարել 2023 թվականի նոյեմբերի 01-ը:

3.Աշխատավարձը՝ ըստ հաստատված հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<31>> հոկտեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 671-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏՔ ԳՅՈՒՂԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ 19 ՀԱՍՑԵԻ 08-032-0026-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ազատիկ Արամայիսի Մեյքոնյանը (ծնված 23/03/1953 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք ժառանգության վկայագրեր 787-20230913-84-7289920 և 787-20230913-84-7289930) իրեն պատկանող 08-032-0026-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,13 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մարտի 16-ի թիվ 1 որոշմամբ Արամայիս Խուրշուդի և Զաբել Մարտիրոսի Մելքոնյանների անվամբ սեփականաշնորհված և ժառանգության իրավունքով Ազատիկ Արամայիսի Մեյքոնյանին փոխանցված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Գետք գյուղի 6-րդ փողոց, 19 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 197,71 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, ավտոտնակը, օժանդակ շինությունները և շվաքարանները կառուցվել են 1964-ից 1972 թվականներին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023GVC24 ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն

որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Գետք գյուղի 6-րդ փողոց, 19 հասցեի հողամասի վրա 1964-ից 1972 թվականներին ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 196,6 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, ավտոտնակը օժանդակ շինությունը և շվաքարանները կառուցվել ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 1972 թվականին կառուցված 1.11 քառակուսի մետր ներքին մակերեսով կիսակառույց օժանդակ շինությունը թողնել ինքնակամ: Ինքնակամ կառույցների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները և ռիսկերը կրում է հողամասի սեփականատերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«31» հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 672 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՅԱՆԴՈՒՐ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 34 ՀԱՍՑԵԻ 08-023-0031-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Բագրատ Սեդրակի Ալեքսանյանը (ծնված 02/01/1960 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 08-023-0031-0004 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,10007 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բայանդուր համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1998 թվականի սեպտեմբերի 04-ի թիվ 5 որոշմամբ Բագրատ Սեդրակի Ալեքսանյանի անվամբ սեփականաշնորհված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բայանդուր գյուղի 1-ին փողոց, 34 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 58,21 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով օժանդակ շինությունը, անասնաշենքը և ավտոտնակը կառուցվել են 1989-ից 1990 թվականներին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023SYJYYL ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը

հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բայանդուր գյուղի 1-ին փողոց, 34 հասցեի հողամասի վրա 1989 թվականին ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 22,13 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով օժանդակ շինությունը և անասնաշենքը ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 1990 թվականին կառուցված 36,08 քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ ավտոտնակը թողնել ինքնակամ: Ինքնակամ կառույցի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները և ռիսկերը կրում է հողամասի սեփականատերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«31» հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 673 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԳՅՈՒՂԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 75 ՀԱՍՑԵԻ 08-037-0009-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վահրամ Սերյոժայի Գաբոյանը (ծնված 06/10/1954 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ բաժնային սեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող 08-037-0009-0024 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,11474 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի օգոստոսի 24-ի թիվ 6 որոշմամբ Վահրամ Սերյոժայի, Արուս Մարտինի, Խասրովուհի, Տաթևիկ և Տիգրանուհի Վահրամի Գաբոյանների անվամբ սեփականաշնորհված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 3-րդ փողոց, 75 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 262,51 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, ավտոտնակը, շվաքարանները և օժանդակ շինությունը կառուցվել են 1987 թվականին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023PCMCCJ ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 3-րդ փողոց, 75 հասցեի հողամասի վրա 1987 թվականներին ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 262,51 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, ավտոտնակը, շվաքարանները և օժանդակ շինությունը ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«31» հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 674-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-077-0007-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՔԱՐՄԻԼԵ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 1-ի թիվ 96-Ա որոշումը և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան գյուղի բնակիչ՝ Քարմիլե Խաչատուրի Գևորգյանը 2022 թվականի դեկտեմբերի 17-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 4,89 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-077-0007-0032 կադաստրային ծածկագրով 0,00808 հեկտար մակերեսով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, 40/1 պարիսպ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկությունը, որոշում եմ՝

1. Օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված ինքնակամ կառուցված և օրինական ճանաչված 4,89 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, ինչպես

նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-077-0007-0032 կադաստրային ծածկագրով 0,00808 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, 40/1 պարիսպ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքով, 44177 (քառասունչորս հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, որից՝ 2565 Հայաստանի Հանրապետության դրամը շինության արժեքն է, իսկ 41612 Հայաստանի Հանրապետության դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի քաղաքացի Քարմիլե Խաչատուրի Գևորգյանին (ծնված 15/01/1939 թվական, բնակվող Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, 40 տուն):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Քարմիլե Խաչատուրի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«01» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 675-Ա

« 02 » նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 31-ի 97-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1. 2023 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ «Առավոտ» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am, Շիրակի մարզպետարանի և Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջերում հրապարակել հայտարարություն՝ մրցույթի անցկացման օրվա, տեղի, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների և հողամասերի նկատմամբ սահմանափակումների մասին՝ համաձայն հավելված 2-ի:

3.Մրցույթը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 137-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

02 նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
Նոյեմբերի 2-ի թիվ 675-Ա որոշման

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կամո	08-051-0114-0001-01	արոտավայր	0,52107	V	անջրդի	Գյուղատն-տեսական գործունեության ծավալում	առկա	5000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կամո	08-051-0114-0001-02	արոտավայր	1	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000
3	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կամո	08-051-0114-0001-03	արոտավայր	1,00624	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
Նոյեմբերի 2-ի թիվ 675-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 3 կտոր հողերի վարձակալության մրցույթ:
Մրցույթը կկայանա 2023 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 11:00-ին, Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, գյուղ Կամո, 1-ին փողոց, շենք 14:
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023 թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ:
Հայտերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 13:00-ն, 14:00-ից 17:00-ն ներառյալ (Հայտերն ընդունվում են Կամո բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում):
Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:
Վարձակալության տրամադրվող հողերի նկարագիրը՝
Լոտերի թիվը՝ 3,
Հողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,
Վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի,
Մրցույթի ձևը՝ բաց,
Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ,
Նախավճարի չափը վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%,
Քայլի չափը՝ վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կամո	08-051-0114-0001-01	արոտավայր	0,52107	V	անջրդի	Գյուղատն-տեսական գործունեության ծավալում	առկա	5000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կամո	08-051-0114-0001-02	արոտավայր	1	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000
3	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կամո	08-051-0114-0001-03	արոտավայր	1,00624	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 676 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 638-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 2-րդ փողոց 60 հասցեի 08-037-0009-0009 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու մասին» թիվ 638-Ա որոշման նախաբանում «0,12518» թիվը փոխարինել «0,123518» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«02» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 677-Ն

«03» նոյեմբերի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 233-Ն որոշման 2-րդ կետի **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի՝ Բաժին 05 Խումբ 06 Դաս 1 «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ծրագրի «Աճեցվեղ տնկիներ» 5131 հոդվածի «1000.0» հազար դրամ թիվը փոխարինել «548.0» հազար դրամ թվով, այդ թվում Բաժին 01 Խումբ 01 Դաս 1 «Օրենսդիր գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի «Վարչական սարքավորումներ» 5122 հոդվածի «3500.0» դրամ թիվը փոխարինել «3952.0» հազար դրամ թվով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի՝ Բաժին 01 Խումբ 06 Դաս 1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածի

«6000.0» հազար դրամ թիվը փոխարինել «5600.0» հազար դրամ թվով, այդ թվում Բաժին 09 Խումբ 01 Դաս 1 «Նախադպրոցական կրթություն» ծրագրի «Գույքի և սարքավորումների վարձակալություն» 4216 հոդվածի «0» դրամ թիվը փոխարինել «400.0» հազար դրամ թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«03» նոյեմբերի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2023 թվականի N 678-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-065-0033-0005 ԵՎ 08-065-0033-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԵՔՍԱՆ ԱՍՔԱՆԱԶԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հացիկ բնակավայրի տարածքում գտնվող համայնքային սեփականության 08-065-0033-0005 և 08-065-0033-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերում 1962 թվականին կառուցվել է ինքնակամ համարվող պահեստ և պարիսպ, որոնք մինչ օրս տիրապետում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հացիկ գյուղի բնակիչ՝ Ալեքսան Ասքանազի Սարգսյանը, ով 2023 թվականի սեպտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել ինքնակամ կառույցն օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,04757 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված պահեստն ու պարիսպը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, որպես ինքնակամ կառույց հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023SSGAB9 ծածկագրով, չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, կառույցների պահպանումը չի խախտվում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, դրանք կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն գտնվում

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կամ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հացիկ բնակավայրի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 08-065-0033-0005 և 08-065-0033-0006 կադաստրային ծածկագրերով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,04757 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 239,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով պահեստը և 3,63 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական և դրանք համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:
2. Սույն որոշման 1-ին կետով օրինականացված գույքին տրամադրել «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Հացիկ, 13-րդ փողոց, 3 պահեստ» հասցեն:
3. Անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականության իրավունքները ենթարկել պետական գրանցման:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները և դրանցով զբաղեցված հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած անձին՝ Ալեքսան Ասքանազի Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«03» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան